27 օգոստոսի 2009 թվականի N 977 - Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 73 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի «1700 Առողջապահություն» բաժինը

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | 1705 | Բժշկական սարքավորումների տեխնիկական շահագործում | Բժշկական սարքավորումների նորոգման և սպասարկման էլեկտրամեխանիկ | 3 | 1 | - » |

տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | 1706 | Հիվանդի ընդհանուր խնամք | Կրտսեր բուժքույր | - | 1 | -». |

2) որոշման N 2 հավելվածի «0500 Մշակույթ և արվեստ» բաժնում՝

ա. հանել

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | | Լուսային ռեժիսուրա | Տեխնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի » |

տողը,

բ. բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | 0520 | Լուսային ռեժիսուրա | Տեխնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի ». |

3) որոշման N 2 հավելվածի «1900 Սարքաշինություն» բաժնից հանել

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | 1912 | Բժշկական տեխնիկայի տեղակայում, տեխնիկական սպասարկում և նորոգում | Տեխնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի » |

տողը.

4) որոշման N 2 հավելվածի «2500 Քիմիական տեխնոլոգիա» բաժնում՝

ա. հանել

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | | Կենսաքիմիական արտադրություն | Տեխնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի » |

տողը,

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| բ. | « | 2509 | Էլեկտրաքիմիական արտադրություն | Տեխնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի » |

տողը փոխարինել

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | 2509 | Կենսաքիմիական արտադրություն | Տեխնիկ | 3 տարի | 2 տարի | 3 տարի » |

տողով.

5) որոշման N 2 հավելվածի «3200 Կենսագործունեության անվտանգություն, բնօգտագործում, շրջակա միջավայրի պահպանություն» բաժնի

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | 3205 | Հողերի բարելավում, հողավերականգնում և պահպանություն | Տեխնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի » |

տողում «Հողերի բարելավում, հողավերականգնում և պահպանություն» բառերը փոխարինել «Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում և պահպանություն» բառերով.

6) որոշման N 2 հավելվածի «3400 Չափագիտություն, ստանդարտացում և որակի հսկում» բաժնում

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| « | 3404 | Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաստում (սերտիֆիկացում) ըստ ճյուղերի | Տեխնիկ | 4 տարի | 3 տարի | 4 տարի » |

տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3404 | Արտադրանքի ստանդարտացում և համապատասխանության հավաս-տում (սերտիֆիկացում)՝ ըստ ճյուղերի | Տեխնիկ | 3 տարի | 2 տարի | 3 տարի |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. օգոստոսի
Երևան